ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2022թ. թիվ 26/26-1/1452-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի 20.01.2022թ. թիվ 98 գրության հիման վրա, 27.01.2022թ. թիվ 26/26-1/1452-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/32 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.01.2022թ. թիվ 98 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ում տեղի ունեցած ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ-22/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 17-ի նիստի ամփոփումից հետո 3, 7, 8, 9, 12, 14, 16, 17, 20, 23, 27, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 42, 44, 45, 47, 49, 56 չափաբաժինների համար հաղթող է ճանաչվել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «Ղահրաման» ՍՊԸ-ին 2021 թվականի դեկտեմբերի 30-ին առաջարկվել է կնքել ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ-22/01-02 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), սակայն մատակարարը հրաժարվել է 8, 16, 23, 31, 32, 33, 36, 37, 39, 40, 42, 44, 45, 47, 49, 56 չափաբաժիններից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի՝ դիմում եմ Ձեզ «Ղահրաման» ՍՊԸ-ին 8, 16, 23, 31, 32, 33, 36, 37, 39, 40, 42, 44, 45, 47, 49, 56 չափաբաժինների մասով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/32 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ -22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 23-րդ, 26-րդ, 27-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ, 56-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Ղահրաման» ՍՊԸ-ն, «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին ուղղված 17.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ղահրաման» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մամե Հասանյանի հայտնում է, որ ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ -22/01 ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվում է 8, 16, 23, 31, 32, 33, 36, 37, 39, 40, 42, 44, 45, 47, 49 և 56 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն «ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ -22/01» ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվել է 8-րդ, 16-րդ, 23-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ և 56-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ին սև ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն դիմելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.01.2022թ. թիվ 26/26-1/1452-2022 գրությունը, «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի 20.01.2022թ. թիվ 98 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ -22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 23-րդ, 26-րդ, 27-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ, 56-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից

հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին ուղղված 17.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«««Ղահրաման» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մամե Հասանյանի հայտնում է, որ ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ -22/01 ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվում է 8, 16, 23, 31, 32, 33, 36, 37, 39, 40, 42, 44, 45, 47, 49 և 56 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն «ԲՔՄ-ԳՀԱՊՁԲ -22/01» ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվել է 8-րդ, 16-րդ, 23-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ և 56-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ին սև ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն դիմելու վերաբերյալ***:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին 17.01.2022թ. ուղղված գրությամբ հրաժարվել է 8-րդ, 16-րդ, 23-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ և 56-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2022թ. թիվ 26/26-1/1452-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**